

«ԷԴԳԱՐ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԼԱՆՁԱՂԲՅՈՒՐԻ ԲԱԶԱԼՏԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ
ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ
ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ԷԴԳԱՐ ՄԱՅՆԻՆԳ»

ՍՊԸ տնօրեն՝

Է. ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2025թ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

Շրջակա միջավայր` բնական եւ մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության եւ մշակույթի հուշարձաններ) եւ սոցիալական միջավայրի (մարդու առողջության եւ անվտանգության), գործոնների, նյութերի, երեւոյթների ու գործընթացների ամբողջությունը եւ դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջեւ.

շրջակա միջավայրի վրա ազդեցություն` հիմնադրութային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետեւանքով շրջակա միջավայրի եւ մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները.

նախատեսվող գործունեություն` շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական եւ տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

ձեռնարկող` սույն օրենքի համաձայն՝ փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող եւ (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

**ազդակիր համայնք`** շրջակա միջավայրի վրա հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն` ֆիզիկական եւ (կամ) իրավաբանական անձինք.

շահագրգիռ հանրություն՝ փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթի ընդունման եւ (կամ) նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական եւ ֆիզիկական անձինք.

գործընթացի մասնակիցներ՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ՝ ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների եւ (կամ) փորձաքննության գործընթացին.

հայտ՝ ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրությամբ փաստաթղթի մշակման եւ (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ.

բնության հատուկ պահպանվող տարածք՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

ազգային պարկ՝ բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

ազգային պարկի արգելոցային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելոցի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի արգելավայրային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելավայրի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի ռեկրեացիոն գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է քաղաքացիների հանգստի և զբոսաշրջության ու դրա հետ կապված սպասարկման ծառայության կազմակերպումը.

ազգային պարկի տնտեսական գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է ազգային պարկի ռեժիմին համապատասխանող տնտեսական գործունեություն.

պետական արգելավայր՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը.

պետական արգելոց՝ գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության.

բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի՝ տարածք, որի ստեղծման նպատակն է սահմանափակել (մեղմացնել) բացասական մարդածին ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա.

լանդշաֆտ՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ.

հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

հողային պրոֆիլ՝ հողագոյացման գործընթացում օրինաչափորեն փոփոխվող և գենետիկորեն կապակցված հողային հորիզոնների ամբողջություն.

խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

հողի պոտենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին.

հողածածկույթ՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է.

հողի բերրի շերտի հանման նորմեր՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը (մ^3), զանգվածը (տ).

ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի

վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ.

կենսաբանական բազմազանություն՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը.

երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները.

բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում.

բնության հուշարձան, բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ.

պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձաններ՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային եւ բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը:

Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք է հանդիսանում դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը սահմանում է, որ «Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը և այլն»:

Սկսած 1991թ. շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ, բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր և կանոնակարգեր են ընդունվել:

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքների ցանկը ներկայացված է ստորև.

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման,

հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

Խախտված հողերի վերականգնմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով կառավարությունը սահմանում է հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջները և խախտված հողերի դասակարգումը՝ ըստ ռեկուլտիվացման ուղղությունների:

- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

- Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.)– կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք (ՀՕ 211-ն, 04.01.2007թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման,

պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

- **Թափոնների մասին օրենք (2004)**

Օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունները, ինչպես նաև մարդու առողջության եւ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական եւ տնտեսական հիմքերը:

Օրենքը սահմանում է թափոնների օգտագործման օբյեկտները, պետական քաղաքականության հիմնական սկզբունքները և ուղղությունները, պետական ստանդարտավորման սկզբունքները, գույքագրումը, վիճակագրական տվյալների ներմուծումը, պահանջների իրականացման մեխանիզմները, թափոնների վերամշակման սկզբունքները, թափոնների պետական մոնիտորինգի իրականացման սկզբունքները, թափոնների քանակի կրճատմանն ուղղված գործողությունները՝ ներառյալ բնօգտագործման վճարները, ինչպես նաև իրավական և ֆիզիկական անձանց կողմից բնությանը և մարդու առողջությանը պատճառված վնասի դիմաց փոխհատուցումը, թափոնների օգտագործումը, պետական մոնիտորինգի իրականացման պահանջները և իրավական խախտումները:

Օրենքը սահմանում է նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև իրավաբանական անձանց ու անհատների իրավունքներն ու պարտականությունները:

- ՀՀ կառավարության 2011թ-ի սեպտեմբերի 8-ի «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» թիվ 1396-Ն որոշումը:

- ՀՀ կառավարության 2017 թ-ի դեկտեմբերի 14-ի «ՀՈՂԵՐԻ ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԽԱԽՏՎԱԾ ՀՈՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N 750-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1643-Ն որոշումը:

- ՀՀ կառավարության 2021թ-ի օգոստոսի 18-ի «ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1352-ն որոշում:

- ՀՀ կառավարության 2017թ-ի հունիսի 15-ի «ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ ԵՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՊԼԱՆԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 676-ն որոշումը:

- ՀՀ կառավարության 2017 թ-ի նոյեմբերի 2-ի «ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՀԱՆՄԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՈՐՈՇՄԱՆԸ ԵՎ ՀԱՆՎԱԾ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի N 1026-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1404-Ն որոշումը:

- ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշում:
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022թ-ի թիվ 369-ն հրամանը:


1. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ***Ընդերքօգտագործման թափոնների վերամշակման օբյեկտի տեղադիրքի և սահմանների նկարագրությունը***

«Էդգար Մայնինգ» ՍՊԸ-ն, բացահանքի շահագործման ընթացքում առաջացող արտադրական թափոնները և մակաբացման ապարների մի մասը, ըստ անհրաժեշտության, նախատեսվում է վերամշակել թափոնների վերամշակման արտադրամասում: Արտադրամասը գտնվելու է Հրազդան քաղաքի վարչական տարածքում, ավտոմայրուղուց շուրջ 400մ հեռավորության վրա, ցածրադիր վայրում:

ՋՏԿ-ի արտադրամասի համար հայցվող տեղամասի կոորդինատներն են՝

1. Y = 8482171.4453 X = 4484625.9314
2. Y = 8482172.0547 X = 4484663.9905
3. Y = 8482165.9408 X = 4484692.4256
4. Y = 8482176.5726 X = 4484690.0973
5. Y = 8482348.7516 X = 4484766.7238

6. Y =8482354.6037 X =4484707.8880
 7. Y =8482474.0737 X =4484630.3440
 8. Y =8482391.9314 X =4484619.9825
 9. Y =8482250.5288 X =4484582.9459
 10. Y =8482239.2711 X =4484584.9977
 11. Y =8482184.8024 X =4484623.2512
- S = 2.9հա




ՋՏԿ արտադրամասի տեղադիրքը կադաստրային քարտեզում: Կադաստրային ծածկագիրը 07-001-0286-0001:



ՋՏԿ-ի տեղադիրքը ըստ Google Eart քարտեզի

Տեղամասի հողերը ըստ նպատակային նշանակության գյուղատնտեսական են, ըստ հողատեսքի՝ արոտավայր:


Ընկերությունը սկսել է հողերի նպատակային նշանակության փոփոխության գործընթացը:




Նպատակային նշանակության փոփոխությունը գտնվում է ավարտական փուլում՝ ՀՀ կառավարության կողմից նախատեսվող փոփոխությունը հաստատվել է:

Համայնքի գլխավոր հարակազմում համապատասխան փոփոխությունները արդեն կատարվել են:


Ստորև ներկայացվում է հատված գլխավոր հատակագծից՝ համապատասխան պայմանական նշանների ցուցադրմամբ.



	ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԵՐ
	ԽԱՌԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԵՐ
	ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՀՈՂԵՐ
	ԱՅԼ ՀՈՂԵՐ
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԵՐ /ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆՇ. ՓՈՂՈՑՆԵՐ/
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԵՐ /ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՆԱԶ ԳՈՏԻ/
	ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱՐՈՎԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ
	ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՎԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ
	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱՐՈՎԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ
	ՊԱՀԵՍԱՐԱՆՆԵՐԻ ՀՈՂԵՐ
	ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱՂՐԱԾ ՀՈՂԵՐ
	ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՄԻՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ



Չկմ շառավիղով հայցվող տարածի հարևանությամբ գտնվող հողերն ըստ նպատակային նշանակության: Հայցվող տարածքն հանդիսանում է Հրազդան քաղաքի թաղամաս: Զրային օբյեկտները բացակայում են:



ՋՏԿ-ի տեղադիրքը ըստ Google Earth քարտեզի 2կմ շառավիղով ցուցադրմամբ

Թափոնների վերանշակման և վնասագերծման նկարագրությունը

«Էդգար Մայնինգ» ՍՊԸ-ի բացահանքի նախագծային հզորությունը կազմելու է 72105.0մ³/տարի: Նման արտադրողականության պայմաններում արտադրական թափոնների տարեկան ծավալը կազմելու է 43984.0մ³, իսկ մակաբացման ապարներինը՝ 6923.0մ³:

Բազալտների արդյունահանումից առաջացող թափոնների և մակաբացման ապարների հերթափոխային ծավալները կազմում են համապատասխանաբար 169.2մ³ և 26.6մ³:

Շահագործման 2-րդ տարուց բացահանքում առաջացող արտադրական թափոնները ամբողջությամբ՝ 169.2մ³ և մակաբացման ապարների (այլովիալ-

դելյուվիալ նստվածքներ, բազալտի հողմնահարված կտորներ) մի մասը $8.0\text{մ}^3/\text{հերթ}$ ծավալով, նախատեսվում է տեղափոխել Հրազդան քաղաքում տեղադրված ՋՏ կայան՝ վերամշակման: ՋՏԿ կտեղափոխվեն նաև 1-ին տարում բացահանքի ներքին լցակույտում պահեստավորված 43984.0մ^3 ծավալով արտադրական թափոնը:

Ընդամենը՝ հերթափոխում նախատեսվում է վերամշակել 177.2մ^3 լեռնային զանգված:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի գ. Ենթակետի՝ ընդերքօգտագործման ոչ վտանգավոր թափոնների վերամշակումը Բ կատեգորիայի գործունեության տեսակ է:


Բազալտների արդյունահանման և դրա ժամանակ առաջացող թափոնների վերամշակումը կատարվելու է 2 CM/Դ-109 այտավոր ջարդիչներով, որոնց ընդհանուր արտադրողականությունը միջինում կազմում է մինչև $46\text{մ}^3/\text{ժամ}$ կամ $368\text{մ}^3/\text{հերթ}$:

Ջարդիչները շարժական են և կարող են տեղափոխվել ըստ անհրաժեշտության: Դրանց տեղադրման համար լրացուցիչ շինարարական բնույթի աշխատանքներ չեն նախատեսվում, կարող են տեղադրվել ամուր գրունտների վրա: Ջարդիչ կայանքների կահավորման հրապարակի մակերեսը կազմվելու է շուրջ 1800քմ մակերես:

Թափոնների վերամշակումը (ջարդում, տեսակավորում) կատարվելու է արտադրական հրապարակի տարածքում գործող հանգույցում, այն բաղկացած է.

– խճի ընդունման բունկերից, այտավոր ջարդիչ, դասակարգիչից, ժապավենային փոխադրիչներից, իներտ նյութի կուտակման հրապարակից:

Աշխատանքների սխեմատիկ պատկերն հետևյալն է.





Այտավոր ջարդիչ CMД-109

Վերամշակման արտադրամասում կիրառվող այտավոր ջարդիչների տեխնիկական բնութագրերը ներկայացվում են աղյուսակում:

Հ/Հ	Տեխնիկական բնութագրիչը	Ցուցանիշը
	Ներբեռնման անցքի չափը, մմ	340
	Բեռնաթափման անցքի չափը, մմ	40-90
	Արտադրողականությունը, մ ³ /ժամ	23-53
	Հզորությունը, կՎտ	45
	Չանգվածը, տ	10.8

Ընդերքօգտագործման ընթացքում առաջացող թափոնները՝ բազալտի կտորներ, ներբեռնվում են այտավոր ջարդիչների սնուցող բունկեր, որտեղ անցնում են մեխանիկական մշակում՝ ջարդում, մանրացում: Վերջնարդյունքում ստացվում է խիճ և ավազ, որոնց չափսերը և ծավալները կախված են պահանջարկից: Թափոնների վերամշակումից ստացված վերջնարտադրանքը՝ խիճն ու ավազը կողային

կոնվեյերով բեռնաթափվում են պահեստավորման ժամանակավոր հարթակի վրա, կուտակվում են այնտեղ մինչև իրացումը: Թափոնների վերամշակման այլ գործառույթ չի նախատեսվում:

Թափոնների վերամշակման թույլտվության ստացման պայմաններում ընկերությունը կղիմի ՀԷՑ-ին՝ տեխնիկական պայմանների ստացման համար, որտեղ կնշվեն էլեկտրական հոսանքի տրամադրման պայմանները:

Թափոնները դեպի վերամշակման օբյեկտ փոխադրման համակարգի նկարագիրը

Արտադրական թափոնների՝ 169.2մ³/հերթ և մակաբացման ապարների՝ 8.0մ³/հերթ բարձումը և տեղափոխումը դեպի ՋՏԿ-ի արտադրամաս իրականացվելու են էքսկավատոր-ավտոինքնաթափ համալիրով, որով ընդերքօգտագործման թափոնները և մակաբացման ապարները բացահանքից բարձվելու են ավտոինքնաթափերը և տեղափոխվելու են ՇՄԸ 109 մակնիշի ջարդիչ-տեսակավորող կայանք՝ խճի և ավազի արտադրության համար /նշված բոլոր մեքենասարքավորումներն առկա են ընկերությունում/:

Թափոնների տեղափոխությունը կատարվելու է 2 ավտոինքնաթափով, ընդհանուր 14 երթով:

Դեպի ՋՏԿ տեղափոխվող արտադրական թափոնների և մակաբացման ապարների տեղափոխման համար անհրաժեշտ տրանսպորտային աշխատանքների պարամետրերը բերված են աղյուսակում:

h/h	Ցուցանիշների անվանումը	Չափ. միավ.	Ծավալները, մ ³	
			մակաբաց. մ ³	թափոններ, մ ³
1	Տեղափոխվող բեռների ծավալը	մ ³ /հերթ	8.0	169.2
2	Տեղափոխման միջին հեռավորությունը	կմ	10.0	10.0

3	Ավտոինքնաթափի միջին ուղերթային արագությունը	կմ/ժամ	25	25
4	Ավտոինքնաթափի բարձրագույն տնողությունը	րոպե	3.5	3.5
5	Ավտոինքնաթափի բեռնաթափման տնողությունը	րոպե	1	1
6	Մանյովրների և սպասումների տնողությունը	րոպե	3	3
7	Մեկ երթի տնողությունը	րոպե	60	60
8	Ավտոինքնաթափի հերթափոխային արտադրողականությունը	մ ³	109.2	109.2
9	Անհրաժեշտ երթերի թիվը	երթ	14	
	Անհրաժեշտ ավտոինքնաթափերի թիվը	հատ	2	

***Թափոնների վերամշակման օբյեկտում պահեստավորվող
թափոնների բնութագրումն ըստ դրանց տեսակների, վտանգավորության
դասի և ծավալների***

Հանքավայրի տարածքի գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ուսումնասիրման համար օգտագործվել են երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցող գրունտների հետևյալ տարատեսակները.

- Կավային գրունտներ
- Խոշորաբեկորային գրունտներ
- Ժայռային գրունտներ

Ստորև աղյուսակում բերված են գրունտների միջինացված ֆիզիկամեխանիկական ցուցանիշները:

Ֆիզիկա մեխանիկական ցուցանիշներ	Չափման միավոր	Գրունտներ		
		Կավային գրունտներ	Խոշորաբեկորային գրունտներ	Ժայռային գրունտներ
1	2	3	4	5
Ծավալային կշիռ	կգ/մ ³	1700	1750	2115
Տեսակարար շաղկապվածություն	ՄՊա	-	0.005	-
Ներքին շփման անկյուն	աստիճան	29	22	-
Դեֆորմացիայի մոդուլ	ՄՊա	20	15	-
Պայմանական հաշվարկային ճնշում	ՄՊա	0.25	0.15	0.80

«Էդգար Մայնինգ» ՍՊԸ-ն շահագործման ողջ ժամանակահատվածի համար լիազոր մարմնից հայցում է ստանալ 1442076.0մ³ բազալտի պաշար, որից, հաշվի առնելով պիտանի բլոկների 39% ելքը՝ 879667.0մ³ հանդիսանալու է արտադրական թափոն:

Բազալտների քիմիական կազմը ըստ անալիզների միջին տվյալների բերված է աղյուսակում:

Բաղադրությունը %, %									
SiO ₂	Fe ₂ O ₃	MnO	TiO ₂	Al ₂ O ₃	CaO	MgO	Na ₂ O	K ₂ O	Խոնավ.
48.7	11.0	0.16	1.53	17.0	9.44	6.94	3.87	1.21	0.08

Ըստ քիմիական կազմի բազալտները բավականին համասեռ են:

Բազալտների ֆիզիկամեխանիկական հատկանիշների որոշման արդյունքները բերվում են աղյուսակում:

N	Ցուցանիշներ	Չափման միավոր	Նվազագ ույն	Առավել ագույն	Միջին
1	Տեսակարար կշիռը	գր/մ ³	2.82	2.97	2.92

2	Ծավալային կշիռը	կգ/սմ ³	2374	2712	2545
3	Ծակոտկենություն	%	7.74	13.26	12.78
4	Զրակլանելիությունը	%	0.97	2.33	1.38
5.	Ամրության սահմանը սեղման ժամանակ	գր/սմ ²			
	-չոր վիճակում		536	958	760
	-ջրահագեցված վիճակում		403	692	578
	-25 փուլ սառեցումից հետո		321	987	502
6.	Փափկեցման գործակիցը				0.760
7.	Սառնադիմացկունության գործակիցը				0.87

ԶՏԿ-ի շահագործման ընթացքում առաջանում են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են՝ մեքենաներում ու մեխանիզմներում փոխվող օգտագործված յուղերն ու քսայուղերը, մաշված դետալների փոխարինման ժամանակ առաջացած մետաղի ջարդոնը, մաշված ավտոդողերը ու կենցաղային աղբը:

Աշխատանքի ընթացքում առաջացող թափոնները ներառում են.

- Շարժիչների բանեցված յուղեր, 1.0տ/տարի՝
դասիչ՝ 5410020102033
բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ միացություններ, բնութագիրը՝ հրդեհավտանգ է, առաջացնում են հողի և ջրի աղտոտում:
Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շարժիչների շահագործման արդյունքում:
- Դիզելային յուղերի մնացորդներ, 0.5տ/տարի՝
դասիչ՝ 5410030302033
բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ միացություններ, բնութագիրը՝ հրդեհավտանգ է, առաջացնում են հողի և ջրի աղտոտում:
Թափոնները առաջանում են մեխանիզմների շահագործման արդյունքում:
Օգտագործված յուղերը ու քսուկները հավաքվում են առանձին տարրաների մեջ և հանձնվում վերամշակման կետեր:
- Բանեցված ավտոդողեր, 0.6տ/տարի՝

դասիչ՝ 5750020213004

բաղադրությունը՝ ռետին, մետաղյա լարեր,

բնութագիրը՝ հրդեհավտանգ է:

Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում: Թափոնները հավաքվում և պահպանվում են իրենց համար նախատեսված տարածքներում՝ հետագայում վերամշակող ընկերություններին վաճառելու համար:

- Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան, 50կգ/տարի՝

դասիչ՝ 9211010013012

բաղադրությունը՝ կապար պարունակող ցանցեր, կապարի օքսիդներ, թթուներ, պլաստմասսա,

բնութագիրը՝ թունավոր է շրջակա միջավայրի համար:

Թափոնները առաջանում են ավտոտրանսպորտային միջոցների շահագործման արդյունքում:

- Կենցաղային աղբ

Պինդ կենցաղային թափոններին պատկանում են՝ թուղթ, ստվարաթուղթ, տեքստիլը, պլաստմասը և այլն:

Թափոնների առաջացման նորման 0.3մ³/տարի 1 մարդու համար:

Տեսակարար կշիռը՝ 0.3տ/մ³:

Կազմակերպությունների գործունեությունից կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր 91200400 01 00 4 :

Պինդ կենցաղային թափոնները կուտակվում են տարածքում առկա աղբամանների մեջ և պարբերաբար հեռացվում համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների կողմից:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 25.08.2015թ-ի թիվ 244-Ն՝ «ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006թ-ի թիվ 342-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» հրամանի՝ սահմանվել են ընդերքօգտագործման թափոնների հետևյալ ծածկագրերը՝

Արտադրական թափոնների համար՝ 34000100 01 00 0 - բաց եղանակով օգտակար հանածոների արդյունահանումից առաջացած մակաբացման ապարներ:

Մակաբացման ապարների համար՝

34000110 01 99 5 - ժայռային մակաբացման ապարներ (հողմնահարված բազալտների կտորներ)

34000120 01 99 5 - փխրուն մակաբացման ապարներ (ավազներ, ավազակավային ապարներ):

Բազալտների արդյունահանման արդյունքում առաջանում են թափոններ հետևյալ բնութագրերով.

«Ժայռային մակաբացման ապարներ» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավորոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 3400011001995:

Վտանգավորության դասը՝ 5/ ոչ վտանգավոր:

Ֆիզիկական բնութագիրը՝ կոշտ:

Բնութագիրը՝ ոչ հրդեհավտանգ, ոչ լուծելի:

Հանքաքանակական բաղադրությունը՝ բազալտ:

Թափոններն առաջանում են հանքավայրի արդյունահանման ընթացքում:

«Խճաքարային փոշի» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավորոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 3140090111004:

Վտանգավորության դասը՝ 4/քիչ վտանգավոր

Ֆիզիկական բնութագիրը՝ կոշտ

Բաղադրությունը – խճաքարային փոշի՝ 100%:

Բնութագիրը՝ պայթյունավտանգ չէ, կարող է առաջացնել տարածքի աղտոտում, էկոթունավոր է, փոշին կարող է առաջացնել շնչառական օրգանների և աչքերի քրոնիկ հիվանդություններ:

Թափոնները գոյանում են բազալտների արդյունահանման աշխատանքների արդյունքում:

«Փխրուն մակաբացման ապարներ» թափոնի տեսակին Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության և սպառման թափոնների դասակարգչում տրված է վտանգավորոր թափոնի հետևյալ ծածկագիրը՝ 3400012001995:

Վտանգավորության դասը՝ 5/ ոչ վտանգավոր:

Ֆիզիկական բնութագիրը՝ փոշենման:

Բնութագիրը՝ ոչ հրդեհավտանգ, ոչ լուծելի:

Հանքաքանական բաղադրությունը՝ ավազներ, ավազակավային ապարներ, հողմնահարված բազալտի կտորներ: Բազալտը կազմում է ընդհանուր զանգվածի 10-15%-ը:

Թափոններն առաջանում են հանքավայրի արդյունահանման ընթացքում:

Բացահանքի շահագործման 2-րդ տարուց բացահանքում առաջացող արտադրական թափոնները՝ 169.2մ³ և մակաբացման ապարների մի մասը, 8.0մ³/հերթ ծավալով, նախատեսվում է տեղափոխել Հրազդան քաղաքում տեղադրված ՋՏ կայան՝ վերամշակման: Ընդամենը՝ հերթափոխում նախատեսվում է վերամշակել 177.2մ³ լեռնային զանգված:

Թափոնների տեղափոխությունը իրականացվելու է 2 ինքնաթափերի միջոցով:

Վերոգրյալի վերաբերյալ հարկ է նշել, որ նման մոտեցման պայմաններում հնարավորություն է ստեղծվում հանքավայրի շահագործումն իրականացնել առանց հողերի լրացուցիչ մակերեսները լցակույտերով ծանրաբեռնելու, փոշեառաջացման նոր աղբյուրների առաջացումը բացառելով: Մակաբացման ապարների վերամշակման արդյունքում ստեղծվում են նոր աշխատատեղեր, սոցիալական վիճակի լավացում, լցակույտերը չեն դառնում շրջակա միջավայրի աղբոտման աղբյուրներ:

Վերամշակման օբյեկտում՝ արտադրական հրապարակում, բացահանքից բերված և վերամշակված թափոնները կուտակվում են կարճաժամկետ կտրվածքով՝ մինչև վաճառքը, իրացումը:

«Էդգար Մայնինգ» ՍՊ ընկերության ՋՏ կայաններում պայմանագրային հիմունքներով կարող են վերամշակվել նաև այլ հանքավայրերից տեղափոխված թափոնները հումքը:

Տեղեկություններ թափոնների վերամշակման օբյեկտի տարողության և վերամշակվող թափոնների ընդհանուր ծավալի վերաբերյալ

Բազալտների արդյունահանման և դրա ժամանակ առաջացող թափոնների վերամշակումը կատարվում է 2 այտավոր ջարդիչներով, որոնց ընդհանուր արտադրողականությունը միջինում կազմում է մինչև $46\text{մ}^3/\text{ժամ}$ կամ $368\text{մ}^3/\text{հերթ}$:

Բազալտների արդյունահանումից առաջացող թափոնների և մակաբացման ապարների վերամշակվող հերթափոխային ծավալները կազմում են համապատասխանաբար 169.2մ^3 և 8.0մ^3 :

Ընդամենը՝ հերթափոխում նախատեսվում է վերամշակել 177.2մ^3 լեռնային զանգված:

Այտավոր ջարդիչների արտադրողականությունն ամբողջությամբ բավարարում է հանքավայրում բազալտի արդյունահանման ժամանակ առաջացող ընդերքօգտագործման թափոնների և մակաբացման ապարների վերամշակման համար:

Թափոնների վերամշակման և վնասագերծման նկարագրությունը

Վերամշակման արտադրամասում կիրառվող այտավոր ջարդիչի տեխնիկական բնութագրերը ներկայացվում են աղյուսակում:

Հ/Հ	Տեխնիկական բնութագրիչը	Ցուցանիշը
	Ներբեռնման անցքի չափը, մմ	340
	Բեռնաթափման անցքի չափը, մմ	40-90
	Արտադրողականությունը, $\text{մ}^3/\text{ժամ}$	23-53
	Հզորությունը, կՎտ	45

	Զանգվածը, տ	10.8

Ընդերքօգտագործման ընթացքում առաջացող թափոնները ներբեռնվում են այտավոր ջարդիչների սնուցող բունկեր, որտեղ անցնում են մեխանիկական մշակում՝ ջարդում, մանրացում: Թափոնների վերամշակումից ստացված վերջնարտադրանքը՝ խիճն ու ավազը կողային կոնվեյերով բեռնաթափվում են պահեստավորման ժամանակավոր հարթակի վրա, կուտակվում են այնտեղ մինչև իրացումը:

«Թափոնների մասին» օրենքի և ՀՀ Կառավարության 2005թ. դեկտեմբերի 9-ի «Թափոնների գոյացման նորմատիվները և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի հաստատման կարգը հաստատելու մասին» թիվ 2291-Ն որոշման պահանջների համապատասխան, փաստացի տվյալների հիման վրա, ընկերությունը լիազոր մարմնի համաձայնեցմանը կներկայացնի վտանգավոր թափոնների անձնագրերը և թափոնների կառավարումը կիրականացնի համաձայն ձեռք բերված թույլտվության:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներին համապատասխան ընկերությունը մթնոլորտային օդի պահպանության բնագավառում լիազոր մարմնի համաձայնեցմանը կներկայացնի մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերը:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ

ԿԼԻՄԱՆ

Մարզում ըստ բարձունքային գոտիականության հանդիպում են Հանրապետության տարածքին բնորոշ կլիմայի գրեթե բոլոր տեսակները:

Օդի հարաբերական խոնավությունը Հրազդանում՝ 72% է, Հանքավանում՝ 74% է:

Շրջանի կլիման բնութագրվում է ցուրտ ձմեռով և մեղմ, զով ամառով:

Օդի միջին ջերմաստիճանը հունվարին Հրազդանում -7.8° է, հուլիս-օգոստոսին՝ 17.4°C : Օդի նվազագույն ջերմաստիճանը դիտվել է Հրազդանում (-31.5°C), առավելագույնը՝ 35°C :

Տեղումների տարեկան քանակը Հրազդանում կազմում է 689մմ: Տեղումների առավելագույն մասը դիտվում է մայիսին, նվազագույնը՝ օգոստոսին: Աշնանը դիտվում է առատ տեղումների երկրորդ շրջանը: Տարվա մեջ ձյունածածկույթով օրերի քանակը Հրազդանում կազմում է 129 օր :

Հողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 92.0սմ:

Ամռանը գերակշռում են արևելյան, իսկ ձմռանը արևմտյան ուղղության քամիները:

Օդի ջերմաստիճանը

Օդ. կայանի անվանումը	Բարձ.ծովի մակարդակից. մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների.°C												Միջին տար. °C	Բաց. նվազ. °C	Բաց. առավ. °C
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Հանքավան	1992	-7,6	-6,6	-3,0	3,6	8,5	11,4	14,8	15,0	11,1	5,9	0,6	-4,8	4,1	-29	32
Հրազդան	1765	-7.8	-6.1	-1.5	5,2	10,3	14.1	17,4	17,4	13,7	7,6	1,3	-4.8	5,4	-31.5	35

Օդի հարաբերական խոնավությունը

Օդ. կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %															
	ըստ ամիսների.												Միջին տար. %	Միջին ամսական ժամը 15-ին		
	I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	XI	XII		Ամեն. ցուրտ ամսվա %	Ամենա շոգ ամսվա, %	
Հանքավան	76	75	74	72	73	74	75	74	72	73	78	77	74	66	49	
Հրազդան	79	77	74	71	70	70	68	65	66	70	76	79	72	79	68	

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը.

Օդ. կայանի անվանումը	միջին ամսական												Ձնածածկույթ	
	Տեղումների քանակը _____ մմ օրական առավելագույն													
	ըստ ամիսների.												Տարեկան քանակը Տեղումների-մարտ ամիսներին,մմ	Տեղումների քանակը ապրիլ- հոկտեմբեր ամիսներին,մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Հանքավան	54	57	69	89	121	104	68	46	44	71	55	45	823	280	543
	38	39	44	69	86	57	42	36	40	52	44	40	86		
Հրազդան	46	55	66	88	100	66	45	30	33	61	52	47	689	266	423
	40	47	45	52	52	42	50	42	49	64	49	34	64		

Քամիները.

Բնակչության անվանումներ	Միջին տարեկան ծնունդ (h)	Տարիներ	Կրկնելիությունը, %									Անդրերի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս – օգոստոս ամիսներին	Միջին արագությունների նվազագույնը ըստ ուղղությունների հունիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագությունների առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
			Միջին արագությունը, մ/վ														
			Հունիսին	Հունիս-Արեւելյան	Արեւելյան	Հարավ Արեւելյան	Հարավ	Հարավ-Արեւմտյան	Արեւմտյան	Հունիս Արեւմտյան							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	
Հրազդան	823,2	հունվար	2	5	11	4	19	39	18	2	27	1,9	Արլ	2,9	Արմ	2,4	
			2,3	2,4	2,0	1,4	1,9	2,3	2,4	1,7							
		ապրիլ	4	14	19	6	13	21	20	3	15	2,1					
			2,3	2,7	2,2	1,8	1,9	2,3	2,4	2,0							
		հուլիս	8	45	35	2	2	3	4	1	7	2,8					
			3,5	3,2	2,9	1,9	2,0	1,9	2,4	2,2							
		հոկտեմբեր	3	12	23	6	11	20	22	3	26	1,7					
			2,0	2,2	2,0	1,7	1,8	2,1	2,2	2,0							

Չյան ծածկույթ

Բնակավայրի անվանումը	Չյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը	Տարվա մեջ ձյունածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
1	2	3	4	5
Հանքավան	139	143	350	-
Հրազդան	132	129	310	92

ՋՐԱՅԻՆ ԱՎԱԶԱՆԸ

Մարզի ջրային ավազանը բավականին հարուստ է: Մարզի տարածքով են հոսում Հրազդան, Մարմարիկ, Մեղրաձոր, Ծաղկաձոր, Դալար, Արջաձոր, ինչպես նաև Գետառ և Ագատ գետերը:


Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ «ՀՀ տարածքում 2024 թվականին 4-րդ եռամսյակի մակերևութային ջրերի որակի ամփոփագրի»՝ Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում:

Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև և Արզնի ՀԷԿ-ից վերև հատվածներում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Արզել գյուղից ներքև հատվածում՝ հոկտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի, Գեղանիստ գյուղի և Երևանյան լճի մուտքի մոտ հատվածներում՝ հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ հոկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ հոկտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս):

ՀՈՂԵՐԸ

Հողն անընդհատ զարգանում և փոփոխվում է: Բնութագրվում է բերրիությամբ՝ բույսերին մատչելի սննդանյութերով և ջրով ապահովելու ունակությամբ, որի շնորհիվ այն դառնում է արտադրամիջոց, աշխատանքի առարկա, նյութական բարիքների աղբյուր: Հողը գյուղատնտ. արտադրության հիմնական միջոցն է. ագրոտեխնիկական, ագրոքիմիական ու բարելավող միջոցառումների կիրառմամբ այն կարելի է դարձնել առավել արդյունավետ, որի ցուցանիշը բույսերի բերքատվությունն է:

Հողերի բնական տիպերի տարածման քարտեզ



Լեռնամարգագետնա-տափաստանային հողեր՝ Այս հողերը տիպիկ են առավել զառիթափ լանջերի, կիրճի անտառածածկ վերին հատվածների, բարձրադիր տափաստանների, սարահարթային խոտհարքների և նախալեռնային շրջանների համար:

Հողի վերին բերրի շերտը որպես կանոն բնութագրվում է սակավահողությամբ: Առավել մեղմաթեք լանջերում այն միջինում 0.15մ է և ծածկված է ենթահողային հորիզոնով, որի հաստությունը տատանվում է բարակից մինչև 0.5 մ սահմաններում:

Հողերը սև կամ մուգ դարչնագույն-շագանակագույն ավազակավեր են՝ տեղ-տեղ քարքարոտ կամ մանրախճային կազմով և թույլ ստրուկտուրայով:

Հողերը թթվային են՝ կրի ցածր պարունակությամբ կամ կրազերծ: Ենթահողից արմատական ապարներ անցումը ցայտուն է և բնութագրվում է արմատական ապարների հողմնահարվածությամբ և թույլ մեխանիկական կազմով կավային կամ քարքարոտ սակավազոր հողերով:

Տեղամասի հողերը ըստ նպատակային նշանակության գյուղատնտեսական են, ըստ հողատեսքի՝ արոտավայր:

Ընկերությունը սկսել է հողերի նպատակային նշանակության փոփոխության գործընթացը:

ՍԵՅՍՄԻԿ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀՀ քաղաքաշինության նախարարի ՀՀՇՆ 20.04 հրամանով սահմանվում են այն չափանիշները, որոնք պետք է դրվեն շենքերի ու կառուցվածքների նախագծման ու կառուցման ընթացքում /սեյսմակայունության հիմնական սկզբունքներ: Նույն հրամանի հավելվածում ներկայացված է ՀՀ բնակավայրերի ցուցակը ըստ սեյսմիկ գոտիների: Այդ ցուցակում ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքը գտնվում է սեյսմիկ երկրորդ գոտում:

Երկրաշարժի հնարավոր ուժգնությունը /բալ/ և գետնի առավելագույն հորիզոնական արագացումները /g/ ներկայացվում են 500 տարում չգերազանցելու 90% հավանականությամբ: ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարի 12. 02.2013թ N 100-Ն հրամանով սահմանվում է սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կազմակերպման և իրականացման դրույթները, համաձայն որոնց կազմվում են սեյսմիկ ռիսկի գնահատման քրտեզներ, որոնք դրվում են մարզերի և համայնքների զարգացման ծրագրերի, քաղաքաշինական փաստաթղթերի մշակման հիմքում և կիրառվում են տարածքների, շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության նվազեցման միջոցառումների պլանավորման, արտակարգ իրավիճակների կառավարման և նրանց հետևանքների վերացման համար:


ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂԻ ՈՐԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Ըստ ՊՈԱԿ-ի «ՀՀ որոշ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ (հնգամյա միջին)» տեղեկատվության, Հրազդան քաղաքում ֆոնային կոնցենտրացիաները հետևյալն են.

Քաղաքը	Աղտոտող նյութը	Միջին հնգամյան կոնցենտրացիան, մգ/մ ³
Հրազդան	Փոշի	0.141
	Ծծմբի երկօքսիդ	0.011
	Ազոտի երկօքսիդ	0.011

Հրազդան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 17 շարժական դիտակետ:

2024 թվականի 4-րդ եռամսյակում Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան նույնաբեր ամսին գերազանցել է համապատասխան ՄԹԿ- ն՝ 1.7 անգամ, դեկտեմբերին՝ 1.1 անգամ: Ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



Աղմուկ և թրթռումներ. Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 80դԲԱ:

ՋՏԿ-ի տարածքում միաժամանակ աշխատող առավելագույն կայանքների թիվը 2 է:

Դրանց գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$L_{\text{գում}} = L_1 + 10 \lg n$$

որտեղ՝

n - աղմուկի աղբյուրի քանակն է՝ 2,

L_1 - մեկ ՋՏԿ-ի աղմուկի մակարդակն է, 100 դԲԱ

Գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ $L_{\text{գում}}$ կազմում է 103դԲԱ:

Աղմուկի մակարդակը տարածքի հաշվարկային կետում որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$L = L_{\text{գում}} - 20 \lg r + 10 \lg \Phi - a^* r / 1000 - 10 \lg \mu;$$

որտեղ՝

$L_{\text{գում}}$ - 103դԲԱ,

r – հեռավորությունն է աղմուկի աղբյուրից մինչև հաշվարկային կետը՝ 60մ,

Φ – ձայնի տարածման համասեռությունն է՝ 1

a – ձայնի մարումը մթնոլորտում՝ 0.7

μ - ձայնի արձակման տարածական անկյունն է՝ $10 \lg \mu = 8$ դԲԱ

$$L = 67 \text{ դԲԱ}$$

Աշխատանքի վայրում աղմուկի թույլատրելի նորման կազմում է 80դԲԱ):

ՋՏԿ-ի օպերատորը գտնվում է ձայնապաշտպան փակ խցիկում և օգտագործում է ականջակալներ:

Գիշերային ժամերին աշխատանքներ չեն կատարվելու:

Ընդերքօգտագործման թափոնների վերամշակման տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է ընդհանուր թրթռում (վիբրացիա): Թրթռաարագացման սահմանային թույլատրելի մեծությունները 1/1 օկտավի դեպքում Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ $X-Y$ առանցքներով՝ 112դԲԱ: ՋՏԿ-ի տարածքում գործարկվող մեքենաներից առաջացող թրթռումները չեն գերազանցելու 85դԲԱ մակարդակը:


Այտավոր ջարդիչների առանձին հանգույցներ կահավորված է աղմուկի մակարդակը նվազեցնող պատյաններով:

ԲՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Հայցվող տարածքը հանդիսանում է Հրազդան քաղաքի թաղամաս և ենթարկված է անտրոպոգեն խիստ ազդեցության: Կենսաբազմազանության վերաբերյալ տեղեկությունը ներկայացվում է Հրազդանի տարածաշրջանի մասով:

Կոտայքի մարզն ունի հարուստ և բազմատեսակ բուսականություն, գտնվում է չոր լեռնատափաստանի և օշինդրային կիսաանապատի սահմանագծին: Տարածքը

բուսաաշխարհագրական տեսակետից պատկանում է Ապարանի ֆլորիստիկ շրջանին:



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

	Բնական բուսածածկի տիպերը
2	Մարգագետնային բուսականություն
3	Մարգագետնատափաստանային բուսականություն
5	Անտառային բուսականություն
9	Տափաստանային բուսականություն
15	Ճահճային բուսականություն
	Գյուղատնտեսական ակտիվ օգտագործվող տարածքներ

Մարզի անտառները լեռնային են, ունեն ընդգծված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև աչքի են ընկնում բուսական տեսակների բազմազանությամբ:

Դիտարկվող շրջանը բնութագրվում է բավականին մեծ ջերմային ռեսուրսով և վեգետացիայի շրջանի երկարատևությամբ: Բուսական ծածկույթը սևահողերի տարածման շրջաններում հիմնականում ներկայացված է տարրախոտափետափոտա-շյուղախոտային բույսերով:

Մարզի դիրքը և ռելիեֆը նպաստել են կենսաբազմազանության հարուստ, ինքնատիպ տեսականու և ագրոկենսաբազմազանության ձևավորմանը: Այստեղ տիրապետում են կիսաանապատային, լեռնատափաստանային լանդշաֆտները՝ համապատասխան բուսական և կենդանական աշխարհներով:

Տարածքի բուսականությունը Ապարանի ֆլորիստիկ շրջանի անտառագուրկ մասերին բնորոշ բուսական համակեցություններ են: Այն ներկայացված է տիպիկ, այս շրջանին բնորոշ ֆիտոցենոզներով:

Մարմարիկի ավազանի բուսական աշխարհը ներկայացված է բարձրակարգ բույսերի ավելի քան 801 տեսակով և ենթատեսակով, որոնք պատկանում են 86 ընտանիքների 360 ազգերին:

Հրազդանի տարածաշրջանում հիմնական անտառ կազմող ծառատեսակներից հանդիպում են կաղնին, բոխին և ավելի քիչ քանակությամբ սոճին: Մարզի անտառային համակեցություններում բավականին մեծ տեղ է զբաղեցնում խոշորատեղ կաղնին, որը շատ լավ է հարմարվում տեղի բնակլիմայական պայմաններին՝ ի շնորհիվ իր բարձր ցրտադիմացկունության և լուսասերության:

Այստեղ տարածված բուսական համակեցությունները հիմնականում կազմված են միամյա հացազգիներից՝ այծակն գլանաձև (*Aegilops cylindrica*), բթաթեփուկ անքիստ (*Amblyopyrum muticum*), աշորա Վավիլովի (*Secale Vavilovii*), ցորեն արարատյան (*Triticum araraticum*), ցորեն վայրի միահատիկ (*T. boeoticum*), ցորեն ուրարտուի (*T. urartu*) և այլն:

Հանդիպում են նաև մի շարք անոթավոր բույսեր՝ հազարատերևուկ սովորական (*Achillea millefolium* L.), կոստուկ Պալլադիի (*Arctium palladinii* Grossh.), օշինդր հայկական (*Arteisia armeniaca* Lam.), օշինդր դառը (*Arteisia absinthium* L.), սիբեխ սովորական (*Falcaria vulgaris* Bernh.), երնջնակ բիլյարդեի (*Eryngium billardieri* Delar.), կղմուխ ականջավոր (*Inula auriculata* Boiss. Et Bal.), խատուտիկ դեղատու (*Taraxacum officinale* Wigg.), սինձ ցանցավոր (*Tragopogon reticulatus* Boiss. Et Huet), կավաժիպակ լազուր (*Anchusa azurea* Mill.), առյուծատամ գանգուր (*Leontodon crispus* Vill.), ճարճատուկ սովորական (*Cichorium intybus* L.), անթառամ ծալքավոր (*Helichrysum plicatum* DC.) և այլն:

Արտադրամասի տարածքում Հայաստանում գրանցված հազվագյուտ, անհետացող և էնդեմիկ բուսականության տեսակները բացակայում են:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչներից այստեղ հանդիպում են սողունների բազմաթիվ տեսակներ, որոնցից են գյուրգան, մողեսանման օձը (*Malpolon*

monspessculanus), սահնոձի տարբեր տեսակներ, ոսկեգույն մաքույան (Mabuya aurata), երկարատու սցինկը (Eumeces schneideri) և այլն:

Երկկենցաղներից հանդիպում են լճագորտը (Rana ridibunda), կանաչ դոդոշը (Bufo viridis), փոքրասիական ծառագորտը (Hyla savigna), թռչուններից (մոտ 50 տեսակ) ուշագրավ են լորը (Coturnix coturnix), մոխրագույն կաքավը (Perdix perdix), սովորական տատրակը (Streptopelia turtur), սովորական բազեն (Falco tinunculus), մկնաճուռակը (Circus macrourus), տնային բվիկը (Athene noctua), ներկարարը (Coracias careulus) և այլն:

Կաթնասուններից տարածված են աղվեսը և աքիսը, եղջերուն, նապաստակը, հազվադեպ նաև կզաքիսը, արջը, գայլը և գորշուկը:

Արտադրամասի տարածքում Կարմիր գրքում գրանցված կենդանիները բացակայում են:

ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ

ՀՀ տարածքում արգելավայրերի թիվը 27-ն է: Արտադրամասի տարածքում բնապահպանական տեսանկյունից խոցելի, կամ բնության հատուկ պահպանվող տարածքները բացակայում են: Այտավոր ջարդիչների տեղակայման վայրին հարակից վայրերում բնության հուշարձաններ հաշվառված չեն:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հավանական բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նկարագիրը ներկայացվում է ստորև:

1. Ջարդիչ կայանք

ա. Բունկեր և փոխակրիչ

Ջարդիչ կայանքի բունկերի և փոխակրիչների արտանետումների հաշվարկը իրականացվել է ըստ Методика по расчету валовых выбросов загрязняющих веществ в атмосферу предприятиями Россевзапстрой. ВРД 66-125-90. М, 1991.

Համաձայն այդ ձեռնարկի փոշու առավելագույն քանակը վարկյանում հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$G_{\text{п}} = C/3600 \times 1000 \times K_r \times K_5 \times K_7, \text{ գ/վրկ, որտեղ՝}$$

C – տեսակարար փոշեառաջացումը, ըստ ձեռնարկի 3-րդ հավելվածի՝ 30 կգ/ժամ

K_r – գործակից, որը հաշվի է առնում գրավիտացիոն նստեցումը, 0.4 (БРД 66-125-90)

K_5 – գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.2

K_7 – գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.1

$$G_{\text{п}} = 30/3600 \times 1000 \times 0.4 \times 0.2 \times 0.1 = 0.067 \text{ գ/վրկ}$$

$$\text{Տարեկան՝ } 0.067 \times 3600 \times 260 \times 8 : 10^6 = 0.5 \text{ տ/տարի:}$$

բ. Ջարդիչ

Ջարդիչների հաշվարկը իրականացվել է ըստ “МЕТОДИКА расчета вредных выбросов (сбросов) для комплекса оборудования открытых горных работ (на основе удельных показателей). Министерство топлива и энергетики Российской Федерации

Ըստ սույն ձեռնարկի առանց փոշեկլանման համակարգի աշխատող ժամանակակից ջարդիչների փոշու տեսակարար արտանետումների գործակիցը հավասար է՝ 7.8 գ/տ հանքաքար:

Հանքաքարի առավելագույն տարեկան արտադրողականությունը կկազմի՝ 94575.0 տ/տարի:

$$G_{\text{м}} = 94575.0 \text{ տ/տարի} \times 7.8 \text{ գ/տ} = 737688.0 \text{ գ կամ } 0.74 \text{ տ/տարի:}$$

Վայրկյանում կկազմի՝ 0.228 գ/վրկ:

2. Պահեստում պահեստավորված արտադրանքի մակերևույթ.

Խճի և ավազի արտադրության ընթացքում նյութի փաստացի միջին մակերևույթը, հաշվի առնելով նրա հաստվածքի ռելիեֆը կազմում է 300մ²:

Փոշու արտանետվող քանակը՝

$$Q_3 = K_3 \times K_4 \times K_5 \times K_6 \times K_7 \times q_1 \times F \text{ գր/վրկ;}$$

Որտեղ՝

$K_3 = 1.2$ գործակից, կախված քամու արագությունից

$K_4 = 0.2$ գործակից, կախված տեղական պայմաններից

$K_5 = 0.4$ գործակից, կախված ապարների խոնավությունից

$K_6 = 1.3$ գործակից, կախված մակերևույթի պրոֆիլից

$K_7 = 0.2$ գործակից, կախված նյութի մեծությունից

$q_1 = 0,002$ - (1.0 մ^2 փաստացի մակերևույթից փոշու անջատումը);

$F = 300 \text{ մ}^2$ - փոշիացման մակերեսը:

Այսպիսով՝

$$Q_3 = 1.2 \times 0.2 \times 0.4 \times 1.3 \times 0.2 \times 0.002 \times 300 = 0.01 \text{ գր/վրկ};$$

Մեկ տարում առաջացած փոշու քանակը կկազմի.

$$Q'_3 = 365 \times 0.6 \times 24 \times 3600 \times 0.01 \text{ գր/վրկ} = 122990 \text{ գր/տարի} = 0.12 \text{ տ/տարի};$$

Ընդամենը տարեկան արտանետումները կկազմեն՝

$$0.5 + 0.74 + 0.12 = 1.36 \text{ տ/տարի};$$

$$\text{Վարկյանում՝ } 0.067 + 0.228 + 0.01 = 0.305 \text{ գ/վրկ};$$

Վնասակար գազերի արտանետումներ.

Մթնոլորտյին օդը աղտոտվում է ծանր տեխնիկայի աշխատանքի ընթացքում՝ դիզելային վառելիքի այրման հետևանքով առաջացած արտանետումներով, որոնք հաշվարկվում են «Методика расчета нормативов выбросов от неорганизованных источников. Астана, 2014 г.» մեթոդական հրահանգի հիման վրա: Վնասակար գազերի արտանետման քանակի հաշվարկը շարժիչներում 1 ձիաուժ հզորության վրա ծախսվող վառելանյութի քանակը կգ/ժամ-երով կազմում է՝ կարբյուրատորային շարժիչների համար $0,4 \text{ կգ/ձ.ու. ժամ}$, իսկ դիզելայինի համար՝ $0,25 \text{ կգ/ձ.ու. ժամ}$:

Համաձայն նախագծի տվյալների աշխատանքների ժամանակ դիզվառելիքի տարեկան ծախսը կկազմի՝ 32 տ/տարի , միջին օրեկան ծախսը կկազմի՝ 0.123 տ կամ 123 կգ/օր :

Մեքենաներից արտանետվող վնասակար նյութերի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$MC = B \times k_{\text{ei}} / 3600, \text{ գ/վրկ}$$

որտեղ,

B – վառելիքի ծախսն է, տ/ժամ;

k_{ei} – i-րդ նյութի էմիսիայի գործակիցն է:

Վնասակար նյութերի համախառն արտահանման հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$MT = 3600 \times M_C \times T \times 10^{-6}, \text{ տ/տարի},$$

որտեղ,

T – ավտոտրանսպորտի աշխատաժամանակն է, ժամ/տարի:

Տեխնիկայի կատեգորիան	Վնասակար նյութը	Էմիսիայի գործակիցը
Էքսկավատոր 1 հատ	CO	100000
	CH	30000
	NO _x	10000
	ՊՄ	15500
Ամբարձիչ 1 հատ	CO	100000
	CH	30000
	NO _x	10000
	ՊՄ	15500
Ավտոինքնաթափ 2 հատ	CO	100000
	CH	30000
	NO _x	10000
	ՊՄ	15500

Վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումները բերված են աղյուսակում: Աղյուսակում միավորվել են ածխաջրածինները, ինչպես նաև ազոտի օքսիդները:

Վնասակար նյութը	Արտանետումները, գ/վրկ	Արտանետումները, տ/տարի
CO	0.106	0.8
CH	0.024	0.18
NO _x	0.012	0.93
ՊՄ	0.001	0.09

Ծծմբային անհիդրիդ

Ծծմբային անհիդրիդի (SO₂) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO₂-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$$ESO_2 = 2 \sum k_s b, \text{ որտեղ } -$$

ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է՝ 22 տ/տարի

$$SO_2 = 2 \times 22 \times 0.002 = 0.088 \text{ տ/տարի կամ } 0.001 \text{ գ/վրկ:}$$

Արտանետումների աղբյուրների բնութագրերը

Արտադրության, տեղամասի անվանումը	Արտանետումների առաջացման աղբյուրները		Արտանետման աղբյուրը	Արտանետման աղբյուրի համարը	Արտանետման աղբյուրի բարձրությունը, H, մ	Աղբյուրի տրամագիծը, մ	Արտանետման արագությունը, մ/վրկ	Արտանետման ջերմաստիճանը T°C
	անվանումը	քանակը						
1	2	3	4	5	6	7	8	9
Արտադրամաս	Տեխնիկական միջոցների շահագործում	1	Հարթակ	1	2.0	40	2.0	18
Պահեստ	Բեռնաթափում, մակերևութային փոշի	1	Հարթակ	2	2.0	35	2.0	18

Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը բացահայտվող շահագործման ընթացքում

Աշխատանքի անվանումը	Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը, գ/վրկ (տ/տարի)					
	Փոշի	NO ₂	CO	ՑՕՄ	Մուր	SO ₂
1	2	3	4	5	6	7
Տեխնիկայի աշխատանք	0.305 1.36					
Դիզ. վառելիքի հետ կապված արտանետումներ		0.012 (0.93)	0.106 (0.8)	0.024 (0.18)	0.001 (0.09)	0.001 (0.088)
ԸՆԴԱՄԵՆԸ	0.305 (1.36)	0.012 (0.93)	0.106 (0.8)	0.024 (0.18)	0.001 (0.09)	0.001 (0.088)

Գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ. Արտանետումների ազդեցությունը գնահատելու համար կատարվել է դրանց ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ, որոնք համեմատվել են բնակավայրերի համար սահմանված սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) հետ:

Հաշվարկը կատարվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարի հրամանով հաստատված “Էկո ցենտր” (“Эко центр”) համակարգչային ծրագրով:

Գումարման հատկություններով օժտված են ազոտի երկօքսիդը և ծծմբային անհիդրիդը, ինչը հաշվի է առվել:

Հաշվարկները կցված են սույն հաշվետվության հավելվածի մասում:

Հաշվարկները ցույց տվեցին, որ բոլոր նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների առավելագույն արժեքները, հաշվի առնելով նաև ֆոնային ցուցանիշները, չեն գերազանցում սահմանված ՍԹԿ-ը:

Հաշվարկները ցույց տվեցին, որ բոլոր նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների առավելագույն արժեքները, հաշվի առնելով նաև ֆոնային ցուցանիշները, չեն գերազանցում սահմանված ՍԹԿ-ը:

Ստորև ներկայացված են գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքները:

Հ/հ	Անվանումը	ՍԹԿ միանվագ առավելագույն մգ/մ ³	Առավելագույն մերձգետնյա կոնցենտրացիաները մգ/մ ³		
			Կոնցենտրացիա ն արտադրական հրամարակում	Սանիտարապ աշտպանիչ գոտում	Բնակելի գոտում
	Փոշի	0,3	0.0054	0.013	0.019
	NO ₂	0.2	0,00947<0,05	Աննշան է, հաշվարկ չի կատարվել	
	CO	5	0,00335<0,05	Աննշան է, հաշվարկ չի կատարվել	

	ՑՕՄ	1	0,00379<0,05	Աննշան է, հաշվարկ չի կատարվել
	Կախված մասնիկներ	0.5	0,000947<0,05	Աննշան է, հաշվարկ չի կատարվել
